



ՀՌԶԱԿԱԳԻՐ

ՆՈՐ ՈՐԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնադիր խորհրդարանը՝ որպես ժողովրդի կամքը ներկայացնելու հավակնություն ունեցող պետական կառավարման այլընտրանքային մարմին,

փաստելով, որ ըստ էության չեն իրագործվել Հայաստանի անկախության հռչակագրի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմնական նպատակները՝ Արցախը Հայաստանի Հանրապետությանը միավորման գործընթացը մտել է փակուղի, երաշխավորված չեն մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ժողովուրդը զրկված է պետականության կրող լինելու և իշխանություն իրականացնելու հնարավորությունից, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը մնացել է որպես օտար պետությունների շահերի իրացման գործիք և չի նպաստում պատմական արդարության վերականգնմանը, Հայաստանի Հանրապետությունը չի կայացել որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն,

ահագանգելով, որ պետության կյանքի բոլոր ոլորտներում հաստատվել և հետզհետե խորանում է ազգի և պետականության գոյությանն սպառնացող համակարգային ճգնաժամ, որը դրսևորվում է.

- ժողովրդի իշխանության և երկրի տնտեսության քրեաօլիգարխիական մենաշնորհացմամբ,
- արդարության և իրավունքի ոտնահարմամբ, համատարած կոռուպցիայով, կառավարիչների բացասական ընտրագատմամբ,
- պետական կառույցների նենգափոխմամբ, ինչպես նաև դրանց և քաղաքական վերնախավի ապագայնացմամբ ու կամազրկմամբ,
- իր պետությունից քաղաքացու օտարմամբ,
- ընտրական մեխանիզմի՝ որպես կառավարող ռեժիմի լիակատար վերահսկողության տակ գտնվող ու նրա վերարտադրությունն ապահովող գործիքի վերածմամբ,
- տնտեսության փլուզման գործընթացով, դրա կառուցվածքի ձևախեղմամբ, գյուղի քայքայմամբ, գործազրկության բարձր մակարդակով, վարձու աշխատողների մեծամասնության շահագործմամբ, սոցիալական ծայրահեղ բևեռացմամբ,
- կրթության, գիտության և մշակույթի հետընթացով,
- բնական պաշարների գիշատչական շահագործմամբ և բնության անապատացմամբ, նրա և կենսոլորտի թունավորմամբ,
- մարդաթափության չափերի հասնող արտագաղթով, որն ուղեկցվում է առաջին հերթին տղամարդկանց, որակյալ աշխատուժի և «ուղեղների» արտահոսքով ու բնակչության վերարտադրության տեմպերի աղետալի դանդաղեցմամբ,
- վերագաղթացմամբ և հայկական պետականության ու Արցախի կորստի վտանգով,
- պատերազմի վերսկսման հավանականությամբ և դրանով պայմանավորված՝ հայրենաբնակ հայության ֆիզիկական բնաջնջման վտանգով,

գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի առաջ, նախաձեռնում է նրան ազատագրական պայքարի նպատակով համախմբելու և քաղաքացիական անհնազանդության քայլերով կառավարող ապագային ռեժիմին հեռացնելու ու Նոր որակի՝ քաղաքացուն որպես հիմնական արժեք ընդունող և նրա վրա հիմնված ինքնիշխան, ժողովրդավարական, աշխարհիկ, իրավական, սոցիալական և մրցունակ հայկական պետության ձևավորման ու զարգացման գործընթացի մեկնարկը:



Նոր որակի հայկական պետությունը, հիմնվելով ազգային մշակույթի վրա և ստեղծագործաբար ներառելով միջազգային անհրաժեշտ փորձը.

1. Որպես արժեհամակարգային ուղենիշ է ընդունում համամարդկային առաքինությունները, հարգում է այդ առաքինություններից բխող մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները և ապահովում դրանց գերակայությունն ու արդյունավետ պաշտպանությունը:

2. Պայմաններ է ստեղծում ազգային ինքնության դրսևորման և մարդու ստեղծագործ կարողության շարունակական հզորացման միջոցով նոր որակի կենսակերպի ձևավորման համար, նպատակ ունենալով՝

- ապահովել հայության, Հայաստանի քաղաքացիների ու բնակիչների, ընտանիքի, համայնքների և էթնիկական խմբերի ազատ, ներդաշնակ ու արժանապատիվ գոյությունն ու ստեղծագործ զարգացումը,

- նպաստել համերաշխ և համագործակցային հասարակության, այդ թվում՝ նրա հանրային համակեցության և քաղաքական ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգերի ձևավորմանը,

- ստեղծել նախադրյալներ հոգևոր ու ֆիզիկական առումներով ներդաշնակորեն զարգացած մարդու, ինչպես նաև իր իրավունքներն ու պարտականությունները գիտակցող և, համապատասխանաբար՝ դրանք պաշտպանելու ունակ ու կատարելուն պատրաստ քաղաքացու կայացման համար:

3. Օժտված է լիարժեք ինքնիշխանությամբ, առաջնորդվում է ազգային և պետական շահերով՝ ձգտելով Հայաստանը վերածել միջազգային հարաբերությունների ստեղծագործ սուբյեկտի և վերաստանձնել Հայաստանի և նրա միջոցով համայն հայության՝ որպես միջազգային հարաբերությունների դերակատարներին կամրջող խաչմերուկի դերը, ինչպես նաև ակտիվորեն մասնակցել տարածաշրջանային և համաշխարհային զարգացմանն ու համագործակցությանը:

4. Ձևավորում է ազգային շահերն արտահայտող նպատակներ առաջադրելու և իրագործելու ունակ պետական կառավարման համակարգ, որն ապահովում է պետական կառավարմանը քաղաքացիների գործունե և արդյունավետ մասնակցություն և հասարակության հետ հետադարձ կապ և հաշվետու է նրա առջև, ինչպես նաև բոլոր ռազմավարական հարցերը լուծում է բացառապես ժողովրդի կամքի արտահայտման միջոցով՝ անմիջական ժողովրդավարության ձևերով:

5. Ջարգացնում է բավարար պաշտպանական հզորություն՝ Հայաստանի պաշտպանական անվտանգությունը ինքնուրույն կերպով ապահովելու և պաշտպանական բաղադրիչի մասով Հայաստանի ու հայության ռազմավարական շահերն իրացնելու համար:

6. Ապահովում է տնտեսական պաշարների և ստեղծվող հարստության արդար ու օրինական բաշխումը, դրանց՝ բնակչության ընդհանուր կենսամակարդակի բարձրացման և ազգի ու պետության անվտանգության համար օգտագործումը, տնտեսական զարգացման ստեղծագործ միջավայրի ձևավորումը, ինչպես նաև պաշտպանում է սեփականության իրավունքը:

7. Ապահովում է տնտեսական շահի նկատմամբ բնապահպանական շահի գերակայության սկզբունքի հիման վրա էկոհամակարգերի վերականգնումը և մարդ-հասարակություն-բնություն կապի ներդաշնակությունը:

8. Ապահովում է գիտության, տեխնոլոգիաների և կրթության վերածումը ազգի և պետության շահերի իրացման գլխավոր գործիքի, ինչպես նաև կրթության հիմնական՝ մարդու և մարդկային



սերունդների ուսուցման ու դաստիարակության դերի վերականգնումը՝ կլաստերային զարգացման մոդելների կիրառման և հումանիտար կրթության վերարժեքավորման միջոցով:

9. Համայն հայության Հայրենիքն է, իր շուրջը համախմբում և արդյունավետ կերպով գործադրում է հայության կարողությունները՝ ի նպաստ նրա պահանջատիրական իրավունքների վերականգնման, Ցեղասպանության հետևանքների հաղթահարման, հայապահպանության, հայրենադարձության, ծնելիության աճման և արդի ցանցային ու տեխնոլոգիական հնարավորությունների միջոցով Հայաստան-Սփյուռք միասնական կյանքով (որպես ամբողջական Հայկական աշխարհ) ապրելու ու գործելու պայմանների ստեղծման:

Նոր որակի հայկական պետությունը գործում է հայակենտրոնության ու հայաստանակենտրոնության, համահայկականության, հասարակական համերաշխության, ազգային փոքրամասնությունների իրավունքների հարգման, միջազգային համագործակցության, ռազմավարականության, արժեքահենքության ու գիտահենքության և ստեղծագործականության սկզբունքների ներդաշնակության հիման վրա:

Հիմնադիր խորհրդարանը պարտավորվում է ոչ ուշ, քան կառավարող ռեժիմին հեռացնելու օրվանից երկամյա ժամկետում ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների առնվազն մեկ քառորդի հետ կնքել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու և Հիմնադիր խորհրդարանի միջև Հայաստանի Հանրապետությունում ժողովրդի իշխանությունը հաստատելու և նոր որակի հայկական պետություն ստեղծելու մասին» պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր) և դառնալ պետական կառավարման լեգիտիմ ներկայացուցչական մարմին*:

Հիմնադիր խորհրդարանը և նրա ընտրած Անցումային կառավարությունը Պայմանագրով սահմանված երկամյա Անցումային փուլում գործելու են անցումային ժողովրդավարության սկզբունքով և իրականացնելու են Անցումային փուլի ծրագիր, որը միտված է լինելու կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող անկումը կասեցնելուն, հնարավոր նենգադուրը (սաբոտաժը) կանխելուն և կայուն ժողովրդավարության վրա հիմնված Նոր որակի հայկական պետության ձևավորման համար մեկնարկային պայմաններ ստեղծելուն:

Անցումային փուլի ընթացքում Հիմնադիր խորհրդարանը պարտավորվում է սույն Հռչակագրին և Պայմանագրին համապատասխան ապահովել համաժողովրդական մասնակցության ձևաչափով նոր Սահմանադրության նախագծի մշակումը, համաժողովրդական քննարկումը, նոր Սահմանադրության ընդունման հանրաքվեի կազմակերպումը, ինչպես նաև նոր Սահմանադրությամբ սահմանված կարգով անցկացնել համապետական և տեղական ընտրություններ**:

* Հիմնադիր խորհրդարանի լեգիտիմացման սույն չափանիշի համար որպես հիմք է ընդունվել գործող Սահմանադրության 113-րդ հոդվածի պահանջը, որի համաձայն «Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը»: Երկամյա ժամկետում ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների առնվազն մեկ քառորդի հետ պայմանագիր չկնքելու դեպքում Հիմնադիր խորհրդարանը պարտավորվում է գործող Սահմանադրությամբ սահմանված կարգով այդ ժամկետի ավարտից հետո երկամյա ժամկետում կազմակերպել համապետական և տեղական արտահերթ ընտրություններ:

** Նոր Սահմանադրություն չընդունվելու դեպքում ընտրություններն անցկացվելու են գործող Սահմանադրությամբ սահմանված կարգով: